

ԵՆՈՐՀԱՒՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ՝ ԶՕՐ. ՊԱՇՏԱՐ ԱՄԱՏԻ

Բազմաթիվ երեսփոխաններ, քաղաքագետներ ու կրօնաւորներ երկկ շնորհաւորական հեռագիրներ յղեցին գօր. Պաշտարար Ասատի, անոր Մուրիտ Նախագահ ընտրուելուն առիթով: Անոնք վստահութիւն յայտնեցին, որ Պ. Ասատի օրով Սուրիա պիտի յաւաքողի ու գործանայ:

Այս հեռագիրներուն կողքին բազմաթիվ անձնաւորութիւններ եւ պատուիրակութիւններ երկկ շնորհաւորական այցելութիւններ տուին Լիբանանի մէջ գրտնուող սուրբական գիտնորական կեդրոնատեղիներ:

Ամալ շարժումի քաղաքական գրասենեակը երկկ երեսփոխան Մոհամէտ Եուսէֆ Պալտունի գլխաւորութեամբ գումարուած իր ժողովըն ետք հրապարակեց հաղորդագրութիւն մը, որուն մէջ շնորհաւորեց Սուրիոյ Նախագահական հանրաքուէի արդիւնքը, որ նուիրազորեց գօր. Պաշտարար Ասատի ղեկավարութիւնը:

Ամալ վերահաստատեց երկու երկիրներու առանցքներու եւ ճակատագիրներու կապի անքակտելի ընդմիջումը:

Ամալ շարժումի քաղաքական գրասենեակի հաղորդագրութիւնը յայտարարեց, որ Աշխատաւորական Համադաշնակցութեան այսօրուան ցոյցը «անհրաժեշտութեան մը աւելի» դարձած է, որպէսզի իսկապէս սկսի պատրաստութիւնը տնտեսական, ընկերային եւ ապրուստի հարցերը դարձանող քաղաքականութիւններու եւ ծրագիրներու:

ԱՇԽԱՏԱՒՈՐԱԿԱՆ ՑՈՅՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԿՈՉԵՐ

Ելեկտրականութեան ընկերութեան աշխատուորներու եւ պաշտօնակներու սեւտիքայի գործադիր խորհուրդը երկկ գումարեց արտաւար գողով մը, ապա հաղորդագրութեամբ մը պատկերով յայտնեց Աշխատաւորական Համադաշնակցութեան կապակերպած ցոյցին եւ կող ուղղեց իր շարքերով մասնակցելու անոր:

Խորհուրդը նաեւ դատաւարտեց ելեկտրականութեան ընկերութեան դէմ շրջապատեցող արշաւը: Խաւատեցող, որ անոր ետին քաջութիւնը քաղաքական ընտրական հաշիւներ, եւ թէ անիկա հող կը պատրաստէ այդ հատատուորեան ապապետականացման: Այնուհանդերձ, խորհուրդը անվերապահ վստահութիւն յայտնեց դատական իշխանութիւններուն նկատմամբ:

Փաղաքաւոր կուսակցութեան քաղաքական գրասենեակը երկկուան իր ժողովին որոշեց մասնակցիլ Աշխատաւորական Համադաշնակցութեան այսօրուան ցոյցին, պահանջելով, որ կառավարութիւնը առաջնահերթ կարեւորութիւն ընծայէ տնտեսական եւ ապրուստի հարցերուն:

Գրասենեակը իր ուսանողական բաժանմունքին ու կուսակցութեան աշխատաւորական հարցերու պատասխանատուներին պահանջեց «ազդու մասնակցութիւն» ունենալ այս ցոյցին:

ՄԱՀԱԶԴ

Տիգրան եւ Անի Աքաբայեան եւ դուստրը՝ Մարայ Սօսի եւ Յարութիւն Տաւրտեան Յակոբ եւ Քնարիկ Աքաբայեան թային եւ Պրայրն Տիտի եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց մօրաքրոջ եւ հարազատին:

ԲԻՆԱ ՄԱՐԼԵԱՆԻ (ՇՆԵԱլ Պետրոսեան, 1915ին)

մահը, որ պատահեցաւ Երեքշաբթի, 11 Յուլիս 2000ին: Յուղարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Չորեքշաբթի, 12 Յուլիս, կէսօրէ առաջ ժամը 11:00ին, Էջրեֆիկի Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ, ուր կ'ընդունուին մարմինը պիտի փոխադրուի Ֆրրն Շրպպէի Ազգային գերեզմանատունը:

- Ներկայս ընդունիլ իբրեւ մահազգ:
- Ցաւակցութիւնները կ'ընդունուին Տիգրան Աքաբայեանի բնակարանը, Մար Միլայիլ, Չորեքշաբթի 12 եւ Հինգշաբթի 13 Յուլիսին:

ՄԱՀԱԶԴ

Սերոր եւ Անի Ագարեան Բաֆֆի եւ Մունա Չաւազաւթեան եւ գաւազունք Վիզիլ եւ Լիւսի Երամեան եւ գաւազունք Այլն եւ Միւրիկ Ագարեան եւ գաւազունք Չաւազաւթեան ընտանիք Պսունեան ընտանիք Քիւփիլեան ընտանիք Ագարեան ընտանիք Գուլաճեան ընտանիք Ժապպուր ընտանիք Սապպաղ ընտանիք եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց մօր, մեծ մօր, անեծք մօր եւ հարազատին:

ԱՍՏՂԻԿ ԿԱՐԱՊԵՏ ԶԱԻԶԱԻԱԹՃԵԱՆԻ (ՇՆԵԱլ՝ ՊՍՈՒՆԵԱՆ)

անակնկալ մահը, որ պատահեցաւ Երեքշաբթի, 10 Յուլիս 2000, Երեկոյեան, իր արակարանին մէջ:

Յուղարկաւորութեան արարողութիւնը ու թաղումը պիտի կատարուի այսօր՝ Չորեքշաբթի, 12 Յուլիս 2000, կէսօրէ ետք ժամը 4:00ին, Ս. Նշան Մայր եկեղեցւոյ մէջ, ուր կ'ընդունուին մարմինը պիտի փոխադրուի Ֆրրն Շրպպէի Ազգային գերեզմանատունը:

- Ներկայս ընդունիլ իբրեւ մահազգ:
- Ցաւակցութիւնները կ'ընդունուին Սերոր եւ Անի Ագարեաններու բնակարանը, Էջրեֆիկ, «Ջահար» փողոց, «Էլիան» շէնք, Չորեքշաբթի 12, Հինգշաբթի 13 եւ Ուրբաթ 14 Յուլիսին:

ԻՐԱՔԱՆՉԻՐ ԲԱՂԱՔԱՑԻ ԻՐԱՒՈՒՆԵ ՌԻՏԻ ԻՐ ԿԱՐԾԻԸ ԱԶԱՏՕՐԵՆ ԱՐՏԱՅԱՅՏԵԼՈՒ

ԿՐԸՄԻ ՀՐՄ

Վարչապետ Սեյիմ Հրս երկկ յայտարարեց, որ կառավարութիւնը ցոյց կատարելու ազատութեան կողմնակից է, որովհետեւ կը հաւատայ, թէ իւրաքանչիւր անհատ իրաւունք ունի ազատօրէն արտայայտելու իր կարծիքը:

Հրս նկատել տուաւ, որ տնտեսական վիճակը դարձանելու աշխատանքը կը շարունակուի, քաղաքացիին տագնապէն դուրս բերելու նպատակով: «Հարցերը կ'ոճակ մը կ'ոյստով չեն լուծուիր եւ կառավարութիւնը կ'աշխատի բոլոր ուղղութիւններով, բայց կը կեդրոնանայ երկրին մէջ ներդրումները փաթեթաբար կ'ընթացող միջոցներով, որովհետեւ այս ձեւով կարելի է վերստին շարժումի մէջ դնել ազգային տնտեսութիւնը», ըսաւ ան:

Երեսփոխանական ընտրութիւններուն անդրադառնալով՝ Հրս հաւատացաւ, որ անոնք պիտի կատարուին ճշդուած թուականներուն: «Մենք վճռած ենք երաշխատելու ընտրութիւններու ազատութիւնն ու պարկեշտութիւնը, եւ գանձք կատարել ճշդակիցին տակ այնպիսի ազատական միջոցառումներու, որոնք քաղաքացիին հնարաւորութիւն կ'ընձեռեն ամբողջական եւ անկաշկանդ ազատութեամբ արտայայտելու իր կարծիքները», ըսաւ ան:

Հրս ընդգծեց, որ կառավարութիւնը ընտրական այս միջոցառումներով չի կարգած եւ գործադրած պիտի ըլլայ ազատ, պարկեշտ եւ ժողովրդավարական ընտրութիւններ կազմակերպելու իր խոստումը:

Վարչապետ Հրս կ'ընդգծեց այն քաղաքացիներուն, որոնք տակաւին չեն ստացած իրենց ընտրական քարտերը, փութալու ապահովելու համար գանձք, եւ քուէարկութեան օրը հոճորագմութիւններով ուղղութիւնը դէպի քուէատուփեր, իրենց կարծիքները արտայայտելու համար եւ ընտրելու այն անձերը, որոնք գիրքեք պիտի ներշնչեն իրենց խորհրդարանին:

«Անկասկած, որ ընտրական քարտի որդեգրումը

մէկն է այն ազգականներէն, որոնք պիտի օգնեն կառավարութեան երաշխատելու այս ընտրութիւններու կատարեալ ազատութիւնը», ըսաւ վարչապետը:

ՀՐՄԻ ՀԱՆԻՒՊՈՒՄՆԵՐԸ

Վարչապետը երկկ ընդհանուր գործադրումները քննարկեց փոխվարչապետ եւ ներքին գործոց նախարար Միշիկ Մորի հետ, ապա ընդունեց ընդհանուր դատախազ Ատնան Ատտուփի, փոսթ հեռագրատան նախարար Իսմայիլ Նամանի, երեսփոխաններ ժիհատ Սամատի, Խալիտ Տահրի եւ Ռիատ Սարրաֆի, ինչպէս նաեւ դրամատուններու վերահսկողութեան յանձնախումբի նախագահ Ուալիտ Ալամէտտինի այցելութիւնները:

ԱՐԱՄ Ա. ԸՆԴՈՒՆԵՑ ԱԻՍՏՐԱԼԻՈՅ ԴԵՍՊԱՆԸ

Արամ Ա. կաթողիկոս երկկ ընդունեց այցելութիւնը Լիբանանի մէջ Աւստրալիոյ դեսպան Ժոն Կեմպելին: Խորհրդակցութեան ընթացքին արծաթեան ընդհանուր Լիբանանի քաղաքական կեդրոնը, Աւստրալիա - Լիբանան փոխարարութեան եւ յատկապէս Աւստրալիոյ հայ գաղութին կապուած շարք մը հարցեր:

ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԾՐԱՍԵՐՈՒ ...

Շարունակուած Ա. Է. Է. Է.

ազատագրումէն մինչեւ օրս իրագործուած աշխատանքները, որոնք կը վերաբերին ճամբաներու, ջրերի, էլեկտրականութեան եւ առողջապահութեան մարգերուն, «գիտնային թէ յառաջդիմութիւն արձանագրուած է»:

«Ընդհանուր տնօրէններէն ու նահանգապետներէն պահանջները մասին պատրաստել մանրամասն տեղեկագիր մը, որպէսզի գայն ներկայացնենք կառավարութեան ժողովին», ըսաւ ան, աւելցնելով, որ նաեւ քրտնարկուած է ազատագրուած շրջաններու անմիջական կարիքներու արագ

իրագործելի, այսինքն՝ առաւելագոյնը մէկ տարեկան զործադրելի ծրագիրի մը պատրաստութիւնը, որպէսզի անիկա ներկայացուցուի ժողովին:

Փոխվարչապետը յայտնեց, որ այս ծրագիրը պիտի արժէ մտաւորապէս 300 միլիոն տոյար, եւ անոր վերաբերող մանրամասն տեղեկագիրը այս շարքում թափերէն առաջ պիտի ներկայացնէ վարչապետ եւ արտաքին գործոց նախարար Սեյիմ Հրսի:

«Ենթակառուցչի նորոգութիւնը պիտի արժէ մտաւորապէս 200 միլիոն տոյար իսկ հարաւի խոր-

հուրդին համաձայն մօտ 110 միլիոն տոյար պէտք է թանգուած ընակարաններու վերաշինութեան համար», յայտնեց Մոր, աւելցրելով, որ արդէն Քուէլթ 20 միլիոն տոյարի նուիրատուութիւն կատարած է, եւ կ'անկաշկանդ, որ Քաթար եւ 10 միլիոն տոյար նուիրէ այս ծրագրին:

Օժանդակութիւնները քաղաքական հարցերու վերաբերող մասին հարցումի մը պատասխանելով՝ Մոր յոյս յայտնեց, որ այդ օժանդակութիւնները կը տրամադրուին, «եւ բոլոր լիբանանցիները պիտեն, թէ անոնք քիչ մը կապուած են քաղաքական եւ դիւանագիտական հարցերու, բայց հանրապետութեան նախագահին ու վարչապետին ճիշդութեան շնորհիւ հարցին այս երեսին վրայ չենք կեդրոնացած»:

ՍԱԹՐԸԻՆԵՆԻ ԷԵՏ

Լիբանանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպան Տէյվիտ Սաթրաֆիտ երկկ այցելեց փոխվարչապետ Մորի, ապա յայտարարեց, որ Ուաշինթընը որոշած է «նեցուկ կանգնելի հարաւային Լիբանանի օժանդակելու ծրագիրներուն»: Ան նկատեց տուաւ, որ լուրջ աշխատանք կը տարուի վերջը յանելու Իսրայիլի գործած սահմանային խախտումներուն եւ յարգելու «կապուտ Գիծ»ը:

Մոր յայտարարեց, որ Միացեալ Նահանգներ պատրաստակամութիւն յայտնած են Համաշխարհային դրամատան ունեւորատու երկիրներու խմբակին միջոցաւ գօրավիզ կանգնելի հարաւի վերականգնումին, եւ յոյս յայտնեց, որ այս աշխատանքը կը յանգի դրական արդիւնքի:

ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՑԻ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Նախագահ գօր. Էմիլ Լահուտ երկկ ընդունեց Իտալիոյ դեսպան Ժոն Կեմպելին, որ յայտարարեց, թէ Հոսմ՝ յատարաստ է մասնակցելու Լիբանանի նուիրատու երկիրներու խորհրդատուութիւնը:

Երկկ նախագահ Լահուտ այցելեց նաեւ շէյխ Ալլաուի Համիտ Մաժալին, որուն կ'ընկերակցէր Յորդանանի մէջ Լիբանանի դեսպան Ատիպ Ալամէտտին:

ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆԸ ՄՕՏԻԿ ԱՊԱԳԱՅԻՆ ՊԻՏԻ ԲԱՐԵԼԱԻՈՒԻ

ԿՐԸՄԻ ԱՄՅԻՏԻ

Տնտեսութեան, ճարտարարուեստի եւ առեւտուրի նախարար Նասէր Սալիտի երկկ հաւատեց, որ թէ լիբանանեան տնտեսութիւնը դժուար պայմաններու մէջ է, բայց այս կացութիւնը ժամանակաւոր է եւ պիտի բարելաւուի մօտիկ ապագային:

Հիւսիսային Լիբանանի մէջ իր կատարած շրջապատային ծիրէն ներս Սալիտի այցելեց Աքքար գաւառին մէջ գործարաններ: Ան հաւատեց, որ տնտեսութեան համար դժուար այս հանգրուանը ժամանակաւոր է եւ հարցերը պիտի սկսին լուծուիլ մօտիկ ապագային:

«Չմոռնաք, որ մէկ տարուան ընթացքին իսրայէլեան երէք ուժգին հարուածներ ստացաւ Լիբանան, եւ այս հարուածները ստեղծեցին ներդրումներուն համար վատառողջ մթնոլորտ, եւ անդրադարձերուն նշանակալից գործունէութեան, արտադրիլի լիբանանցիներու այցելութեանց եւ այլ մարպետներու վրայ, բայց այդ ապագայութիւնը արդէն չքացած է», ըսաւ Սալիտի:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

• ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ Եւ պետական վարչամեքենայի խորհրդարանական յանձնախումբը երկկ երեսփոխան Տաքեր Ալուր Սլէյմանի գլխաւորութեամբ տեղեկատուութեան նախարար Անուար Խալիլի քննարկեց նախարարութեան վերակազմակերպման օրինակները:

Ժողովը որդեգրեց օրինակները եւ գայն յղեց խորհրդարանի նախագահութեան լիազումար ժողովին ներկայացնելու գայն առ ի վաւերացում:

• ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ Եւ նախարար Ղազի Չապրէր երկկ նրապարակեց որոշում՝ մը. որուն հիմամբ. 1 Սգոտտաի առաւօտեան ժամը 6:00էն մինչեւ 5 Սեպտեմբերի կէս գիշերը կը սահեցուին զէնք կրելու բոլոր արտօնագրիները. լիբանանեան բոլոր շրջաններէն ներս:

• ԻՐԱՄԱԿԱՆ Եւ հարցերու ընդհանուր դատախազ Խալիլ Թահնալ երկկ քրեական հարցերու վճարեկատեանին ներկայացուց դիմում մը. բեկակելու Պեքաշի քրեական առեւտրի 22 Յունիսի որոշումը, որ կ'ընդունէր Չահլէի շուրի ընկերութեան յատաստանումներու եւ յաշտօնեցաներու այն առարկաները, թէ զիբեք դատական հետաւորումի երկարելու նախարարութեան թուղտուրիւնը ստանալէ առաջ իրենց ամբաստանութիւնները ուղղուած էին:

Պեքաշի առեւտրը այս հետաւորութեան հիման վրայ ազատ արձակած էր արգելափակուած յաշտօնեաները եւ շնչած՝ փախստականներու ձերբակալման գլխերը, առանց քննարկելու անոնց ուղղուած պետական գումարները մ'սիրելու եւ իւրացնելու ամբաստանութիւնները:

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՕՐՈՒԱՆ ՅԱՅՏԱԳԻՐԸ

ԿԱՆԱՅ ԶԱՅՆ	ԿԱՆԱՅ ԶԱՅՆ
6:30 - Բացում	
6:35 - Բարի լոյս	
7:00 - Հայկական եւ օտար մեղմ երգեր	
8:00 - Օրուան յայտագրի ընթերցում	
8:15 - Տեղական մամուլի խորագիրներու ընթերցում	
8:30 - Հայերէն լուրեր	
8:40 - Օղերբերոյթ	
8:45 - Ինչ կ'ըսեն աստղերը	
9:00 - Հայկական խառն երգեր	
9:30 - Թիւքք	
10:00 - Մակարան	
10:30 - Արաբերէն լուրեր	
10:45 - Արաբերէն երգեր	
11:30 - Հարցապարոյց	
12:00 - Շահանդուխտի հետ	
12:15 - Երաժշտութիւն	
12:30 - Հայերէն լուրեր	
13:00 - Մակարան	
13:05 - Ազգային լեռնափոխական երգեր	
14:30 - Արաբերէն լուրեր	
15:00 - Արաբերէն յայտագիր	
16:30 - Արաբերէն լուրեր	
16:40 - Հանդիպում	
18:00 - Beatlesh պատմութիւն	
18:30 - Հայերէն լուրեր	
19:00 - «Ով էս էս» հետ. մրցում	
20:30 - Էսքրաուային	
22:30 - Պատուէր	
00:30 - Փակում	

ԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՏԻ ԻՐԱԻՈՒՆՔ Է. ՏԻՐ ԿԱՆԳՆԻՐ ԱՆՈՐ

«ՀԱՅՈՒԹԻՒՆԸ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՇԱՐՔԵՐՈՎ ՊԷՏՔ Է ՄԱՄՆԱԿՅԻ ԿԻՔՆԱՆԻ ԵՐԵՍՓՈՒՍԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ»

Ստորև կու տանք երեսփոխանական ընտրութիւններու նախընտրական հանգրուանի աշխատանքներուն մասին «Վանայ Չայն»-ի կատարած հարցազրոյցը **Լ. Յ. Դաշնակցութեան Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Բենիամին Պչաքեանի հետ:**

ՀԱՐՑՈՒՄ - Յառաջիկայ երեսփոխանական ընտրութիւններու շրջագծին մէջ, յատկապէս Պէյրութի ընտրաշրջաններուն մէջ սկսած է տիրել ընտրական մթնոլորտ: Լիբանանեան առումով, ի նշյոյէս կը դիտք աւս ընտրութիւնները, այլ խօսքով՝ ինչ ո՞վ կը յատկանշուին այս ընտրութեանց նախապատրաստական աշխատանքները:

ՊՍԱՄԱՍԽԱՆ - Երեսփոխանական այս ընտրութիւնները զանազան իմաստներով կը տարբերին նախորդներէն: Պէտք է նկատել, որ այս ընտրութիւնները յետ պատերազմեան շրջանին երրորդն են: 1992-ի ընտրութիւնները պէտք եղած մասնակցութիւնը չապահովեցին ժողովըրդային իմաստով, որոշ տարրեր չմասնակցեցան, հետեւաբար անոնք ամբողջական պատկեր չէին ներկայացներ: 1996-ի ընտրութիւններուն նաև այսօրուան մթնոլորտը չկար, դարձեալ մասնակցութեան իմաստով:

2000-ի երեսփոխանական ընտրութիւնները ժողովրդավարութեան իմաստով ամբողջական պատկեր մը պիտի տան լիբանանեան զանազան քաղաքական ուժերու դիրքաւորումներուն:

Այս ընտրութիւնները լիբանանեան առումով կը կայանան իսրայէլեան ուժերու հետաքննան իբրեւ արդիւնք ստեղծուած կացութեան մէջ:

Առաջին իսրայէլեան ուժերը քաշուեցան հարաւային Լիբանանէն. հարաւը այսօր ազատագրուած է:

Երկրորդ՝ հիմնական մթնոլորտը, որ կը տիրէ այս ընտրութիւններուն, տնտեսական սուր տագնապն է. ամէնէն սուրը յետպատերազմեան շրջանին:

Նաեւ պէտք է նկատի ունենալ, որ Միջին Արեւելքի իրադրութեան գործընթացը այսօր վնասող փուլի մը մէջ մտած է: Տեղաշարժեր տեղի կ'ունենան. ինչպէս՝ Լիբանանէն իսրայէլեան ուժերու նահանջը, ինչպէս նաեւ սուրիական - իսրայէլեան եւ պաղեստինեան - իսրայէլեան բնակչութիւններու ընթացքը:

Այս մթնոլորտին մէջ երեսփոխանական ընտրութիւններուն կարեւորութիւն կ'ընծայուի լիբանանեան առումով. որովհետեւ ընտրութիւններէն ետք կազմուելիք խորհրդարանը պիտի կարենայ դիմագրաւել գալիք ժամանակաշրջանը նոր օրէնսդրութեամբ. նոր որոշումներով պիտի կարենայ ստեղծել այն մեքենան, որ պիտի վերահսկէ կառավարութեան գործունեութիւնը: Հետեւաբար, լիբանանեան առումով, շատ կարեւոր դեր պիտի ստանձնէ այս խորհրդարանը:

Հայկական իմաստով եւս կարեւոր են այս ընտրութիւնները. որովհետեւ Լիբանանի մէջ հայութեան քաղաքական կշիռը կը հետաքրքրէ ոչ միայն լիբանանահայութիւնը, այլ նաեւ՝ ամբողջ սփիւռքահայութիւնը եւ հայրենի ժողովուրդը: Այսօր ամբողջ հայութիւնը իր աչքերը սեւեռած է Լիբանանի վրայ եւ կ'ուզէ տեսնել, որ հայութեան քաղաքական կշիռը ոչ միայն չի նուազիր, այլ աւելի եւս կ'ամրապնդուի:

Կարեւոր է այստեղ հայկական բոլոր ուժերուն մասնակցութիւնը ընտրութիւններուն: Անհրաժեշտ է նաեւ զանգուածային մասնակցութիւնը: Հետեւաբար հայութեան բոլոր շերտերը միասնաբար պէտք է դիմագրաւեն գալիք ընտրութիւնները՝ կարենալ ապահովելու եւս մ-

րապիղծելու համար հայկական քաղաքական կշիռը Լիբանանի մէջ:

Հ. - Մամուլէն տեղեկ եկը արդէն, որ միջկուսակցական գետնի վրայ ընդգծուած է անհրաժեշտութիւնը հայութիւնը միացեալ հակատու գեպի երեսփոխանական ընտրութիւններ առաջնորդելու: Այս առումով, ի նշ ճամբայ կտրած են միջկուսակցական աշխատանքները եւ ի նշ հետանկարներ կը պարզուին մեր առջեւ:

Պ. - Հայկական իմաստով այս ընտրութիւնները կարեւոր են: Հետեւաբար անհրաժեշտ է, որ ապահովելք լիբանանահայութեան զանգուածային մասնակցութիւնը: Կարեւոր է, որ հայութիւնը իր ամբողջ շերտերով, իր զանազան մտածողութիւններով այս ընտրութիւններուն մասնակից դառնայ միացեալ հակատու մը:

Պ. - Ետք է ըսել, որ լիբանանահայութիւնը բազմալից կրցած է իր դեմ ծառայող դժուարութիւնները միասնաբար յաղթահարել: 1965-ին՝ Հայկական Ցեղասպանութեան լիսնամեակին առիթով, հայութեան երեք կուսակցութիւնները քով-քովի գալով որոշեցին միասնաբար ոգեկոչել Եղեռնի լիսնամեակը եւ գտան հասարակ յայտարար մը, ինչ կը վերաբերի հակաբուրք պայքարին: Այդ միասնական կեցուածքը շարունակուեցաւ նաեւ հետագային, ի մասնաւորի լիբանանեան քաղաքացիական պատերազմի օրերուն: Երեք կուսակցութիւնները կրցան քով-քովի գալով՝ ճշդէլ հայութեան համար լաւագոյն ճանապարհը նուազագոյն վնասներով դուրս գալու քաղաքացիական պատերազմէն եւ որդեգրեցին դրական չեզոքութեան քաղաքականութիւնը՝ դիմագրաւելու համար կացութիւնը:

Մ. - Մտած է անշուշտ, որ այդ քաղաքականութեան իբրեւ արդիւնք հայութիւնը զերծ մնաց ծանր կորուստներէ եւ վնասներէ, եւ շահեցաւ բոլորին յարգանքը:

Յ. - Յոյսով ենք, որ այս հանգրուանն ալ պիտի կարենանք միասնական հակատու դիմագրաւել: Հայութեան քաղաքական կշիռը պահելու եւ աւելցնելու համար շատ կարեւոր է, որ երեք կուսակցութիւնները կարենան միացեալ հակատու կերպով ընտրութիւններուն: Բարեբախտաբար ներլիբանանեան քաղաքականութեան առումով, հիմնական տարակարծութիւններ չկան երեք կուսակցութիւններուն միջեւ: Այսօր հայկական կուսակցութիւններուն մօտ կայ նատուրալութիւնը. որ կը ձգտի հայութեան շարքերը միացեալ պահել: Հետեւաբար այդ միասնականութիւնը պէտք է գետնի վրայ գործնականացուի: Կան զանազան մանրամասնութիւններ, որոնք արդէն ժողովներու եւ հանդիպումներով կը փորձեն դիմագրաւել:

Հայութեան շահերէն մեկնելով եւ ի մասնաւորի լիբանանահայութեան քաղաքական ուժի ամրապնդման իմաստով կարեւոր է, որ հայութիւնը զանգուածային մասնակցութիւն բերէ այս ընտրութիւններուն, իր բոլոր շերտաւորումներով միասնաբար տեր կանգնի իր շահերուն եւ մէկ հակատ կազմելով դիմագրաւել լիբանանահայութիւնը: Այս ձեւով մենք յաղթահարած կ'ըլլանք այն բոլոր միտումները եւ այն քաղաքական հարցադրումները, որոնք կը դըրժին հայութեան կեցուածքին մասին, եւ պարտութեան մատնած կ'ըլլանք այն ուժերը, որոնք այսօր գրաւ դրած են, որ հայութիւնը պառակտուած շարքերով պիտի ներկայանայ ընտրութիւններուն:

Կարեւոր է, որ միասնաբար ներկայանանք եւ կարեւոր է նաեւ, որ միասնաբար յաջողինք:

Հ. - Լիբանանեան տեղական մամուլին հետեւողը կը նկատէ, որ սուր հետաքրքրութիւն կամ շահագրգռութիւն ստեղծուած է հայութեան քուէներուն նկատմամբ:

Պ. - Ճիշդ է, որ տեղական մամուլը այս իմաստով լուրջ հետաքրքրութեան առարկայ դարձուցած է հայութեան դիրքորոշումները: Այս մէկը բնական է: Պէտք է նկատել, որ 1996-ին, երբ հայութիւնը միացեալ հակատու կերպով ընտրութիւններուն, իր քաղաքական կշիռը եւ քուէները այնքան ծանր կշռեցին, որ Պէյրութի ընտրաշրջանին մէջ 19 երեսփոխանական թեկնածուներու վրայ 15ը հայութեան քուէներով յաջողեցան:

Հետեւաբար բնական է, որ մամուլը, քաղաքական ուժերը եւ զանազան մամուլեայ այսօր հետաքրքրուած ըլլան հայութեան կեցուածքով, եւ որպէսզի մենք կարենանք մեր կշիռը պահպանել, կարեւոր է, որ միասնականութիւնը յաջողի:

Մամուլին մէջ եղած տեղեկութիւնները եւ ապատեղեկութիւնները, որոնք յատուկ ճիգ կը բափեն այնպէս ներկայացնելու, որ հայութիւնը պառակտուած է, հայութեան շահերը չեն հետապնդեր: Պէտք է մամուլին կամ զանազան լրագրողներու տեսն տեսնել կամ փնտռել այն ուժերը, որոնք այսօր շահագրգռուած են հայութեան

ուժին շլատուժով: Այդ դիտանկիւնէն է, որ պէտք է դիտել հարցերը եւ չհաւատալ ապատեղեկատուութեան: Այսօր հայութիւնը ամէն բանէ վեր կը դասէ իր ազգային եւ հաւաքական շահերը եւ անոր պիտի ձգտի այս ընտրութիւններուն եւս: Հետեւաբար մամուլին մէջ լուստեսած տեղեկութիւնները, ուր կը ներկայացուին հայութեան զանազան խմբաւորումները պառակտուած վիճակի մէջ, զանազան հայ անհատներու, թեկնածուներու հաւանականութիւններ, կուսակցութիւններու միջեւ եղած հարցեր, եւ այլն, բոլորը մէկ բանի կը միտին՝ հայութեան ուժը շլատուած տեսնել գալիք հանգրուանին: Այս մէկը մեր կողմէ մերժելի է:

Հ. - Ինչպէս կը ճշդուին հայ թեկնածուները, ի նշ չափանիշներ նկատի կ'առնուին անոնց առաջադրման համար:

Պ. - Հայ թեկնածուին դիմագիծը կը ճշդուի այն սկզբունքէն, որ ան հայկական իրականութեան որեւէ մէկ բնագաւառին մէջ իր մասնակցութիւնը բերած ըլլայ: Կարեւոր է, որ ան իր ներդրումը ունեցած ըլլայ մեր ազգային կեանքին մէջ եւ իր յարաբերութիւններով բան մը աւելցնէ հայութեան քաղաքական կշիռին վրայ: Անշուշտ նաեւ նկատի կ'առնուին հայութեան զանազան շերտաւորումները, մտածողութիւններուն եւ առաւելագոյն ներկայացուցչութեան ապահովումը եւս:

Հ. Ընտրական գործակցութիւններու ուղղութիւնը ի նշյոյէս կ'որոշուի:

Պ. - Պէյրութի մասին պէտք է շեշտել, որ ընտրական նոր օրէնքը կը տարբերի նախորդ ընտրութիւններու օրէնքէն: Այսօր ընտրաշրջանները փոխուած են, հիմնականին մէջ հոն, ուր հայութեան քուէները կշիռ կը ներկայացընեն, ինչպէս՝ Պէքաւաի, Լեռնալիբանանի Միքէլի շրջանին եւ ի մասնաւորի Պէյրութի շրջանին մէջ: Պէյրութը բաժնուած է 3 ընտրաշրջաններու, ուր հայութիւնը ունի քուէարկողներ եւ աքոռներ: Հետեւաբար Պէյրութի մէջ հայութիւնը իբրեւ մէկ ընտրատարածք մասնակցութիւն պիտի չկարենայ բերել. այլ երեքի պիտի բաժնուի թէ իր քուէարկողները եւ թէ իր աքոռները: Այս իրողութեան մեկնելով պէտք է նկատի ունենալ գործակցութիւնները կամ յարաբերութիւնները, որոնք պիտի մշակուին յառաջիկայ օրերուն:

Ընտրական քարտերը այսօր կը պարտադրէ, որ որոշ հաւասարակշռութիւն ստեղծուի Լիբանանի մէջ գործող քաղաքական զանազան ուժերուն միջեւ: Այս մէկը կը պարտադրուի ընտրական քարտէսին կողմէ. ան նաեւ քաղաքական պարտադրանք մըն է: Հետեւաբար պէտք է անխտիր բոլոր ուժերուն հետ յարաբերութիւններ մշակել, բոլորին տեսակետները ունենալ եւ խորհրդակցել փոխարձակ շահերու մասին, Լիբանանի շահերուն մասին: Իսկ մեր կեցուածքն է՝ մեկնել մեր ազգային գերագոյն շահերէն եւ անկախ ուրոյն քաղաքականութիւն վարելու բացարձակ հրամայականէ՝ մշակելով գործակցութեան զանազան եզրեր գետնի վրայ գործող ուժերուն հետ:

Հ. - Շատ կը յօսուի աւետարանական արժիւն հայկական դիմագծին վտանգուած ըլլալուն մասին: Ի՞նչ է ձեր արձեռնած մըր այս մասին: Եթէ կայ մնալի տանգ, ի նշյոյէս կը պատկերացնէք դիմագրաւել այս դժուարութիւնը:

Պ. - Ճիշդ է, որ դժուարութիւն մը կայ Հայ աւետարանական արժիւն կապակցաբար, որովհետեւ այն ընտրատարածքին մէջ, ուր կը գտնուի հայ աւետարանական արժուրդը՝ Պէյրութ թիւ 1 ընտրաշրջանը, այսօր հայութեան քուէները աչքաբան ծանր կշիռ չեն ներկայացներ, որքան միւս շրջաններուն մէջ՝ Պէյրութ 2 եւ Պէյրութ 3:

Սակայն ի սկզբանէ ըսել, որ այդ արժուրդը արդէն իսկ կորած է, պարտաւորական հոգեբանութիւն կը ցուցաբերէ, որ ի՞նչ չենք գտներ:

Մենք մեկնելով հայութեան իրաւունքներուն տեր կանգնելու մեր պարտականութենէն եւ նախանձախնդրութենէն՝ մղուած ենք այս հարցին նկատմամբ սկզբունքային մօտեցում: Նկատի ունենալով, որ աւետարանական համայնքին շուրջ 75 տարիները հայութիւնը եւս, եւ այդ աքոռին ներկայացուցիչը տարիներ շարունակ հայ աւետարանական մը, մենք տեր կը կանգնելք այս աքոռին: Համոզուած ենք նաեւ, որ եթէ կարողանանք հայ իրականութեան մէջ միացեալ նակար մը պահուել, պիտի տարիներ շարունակ հայ աւետարանական մը, մենք տեր կը կանգնելք այս աքոռին: Համոզուած ենք նաեւ, որ եթէ կարողանանք հայ իրականութեան մէջ միացեալ նակար մը պահուել, պիտի տարիներ շարունակ հայ աւետարանական համայնքին: Այս առնչութեամբ կարեւոր է միացեալ կեցուածքը եւ միացեալ հակատակ

մէկը եւ կը հաւատանք, որ անպայման կը յաջողինք. եթէ հայութեան բոլոր շերտերը, բոլոր կազմակերպութիւնները նամոզուին, որ միասնաբար պէտք է պահանջել այդ արժուրդը, միասնաբար տեր կանգնել այդ արժիւնը հայկական դիմագիծին:

Հ. - Հայկական երեսփոխանական պլոնը ծանօթ է իր ազգանպաստ գործունեութեամբ: Իբրեւ քաղաքական հիմնական միաւոր ի՞նչ առաջադրանքներ կան պլոնի ուղղութեամբ:

Պ. - Բոլորիդ ծանօթ է, որ հայկական երեսփոխանական պլոնը աւանդութիւն դարձած էրեւոյթ մըն է մեր քաղաքական իրականութեան մէջ: Լիբանանի մէջ հայկական երեսփոխանական պլոնը իր քաղաքական կշիռը ունի: Պլոնը այն հաւաքականութիւնն է, որ մեր համայնքի եւ մեր ժողովուրդի զանազան շահերը կը հետապնդէ, նաեւ տեր կը կանգնի մեր իրաւունքներուն:

Հետեւաբար այս պլոնին պահպանումը հրամայական է: Հայկական երեսփոխանական պլոնը պէտք է մնայ, հոն պէտք է ներկայացուած ըլլայ ամէն տեսակի մտածողութիւն հայկական իմաստով, եւ այդ հաւաքականութիւնը պէտք է իր կշիռը բանեցնէ լիբանանեան քաղաքական բեմէն ներս:

Չենք կրնար պատկերացնել հայութեան քաղաքական դերը Լիբանանի մէջ՝ առանց հայկական երեսփոխանական պլոնին: Ան է, որ տեր պիտի կանգնի մեր իրաւունքներուն, պահանջատէր ըլլայ մեր ազգային իրաւունքներուն եւ նաեւ ներկայացնէ մեզ լիբանանեան պատկան շրջանակներուն մօտ:

Կարեւոր է, որ հայկական երեսփոխանական պլոնը թարգմանը ըլլայ այն անկախ եւ ուրոյն քաղաքականութեան, որ կ'ուզենք վարել Լիբանանի մէջ: Առանց այդ պլոնի գոյութեան, կարելի չէ պատկերացնել հաւաքական կշիռ, հաւաքական ներկայութիւն լիբանանեան քաղաքական իրականութենէն ներս:

Հ. - Լ. Յ. Դաշնակցութեան լիբանանեան ընտանիքը ի նշ կը սպասէ իր համակիր զանգուածներէն՝ լիբանանահայ գաղութէն այս ընտրութիւններու նախօրեակին:

Պ. - Արդէն իսկ մեր հանդիպման ընթացքին շեշտեցինք մեր ակնկալութիւնները մեր ժողովուրդէն: Կարեւոր է զանգուածային մասնակցութիւնը այս ընտրութիւններուն: Եթէ 1996-ի ընտրութիւններուն եղած քարտաշարը հայութեան դեմ այն էր, որ հայութիւնը այս երկրին մէջ ապրեալ կշիռը, այսինքն՝ նախապատերազմեան շրջանին ունեցած ուժը չի ներկայացնէր. մենք 1996-ին նկատեցինք փաստելու, որ այդպէս չէ. եւ որ մեր հաւաքականութեան շրջանը իր վնասները դերը ունի լիբանանեան քաղաքական իրականութենէն ներս եւ զանազան թեկնածուներու յաջողութեան մէջ: Հետեւաբար հայութիւնը նկատառելի ուժ է Լիբանանի մէջ: Այսօր այլ ձեւերով մը նկատուած է հայութեան երեսին, թէ՛ հայութիւնը միասնական չէ եւ միացեալ շարքերով չէ. որ պիտի մասնակցի այս ընտրութիւններուն: Այդ գրաւը դրուած է. եւ մենք ինչպէս 1996-ին, պիտի յաջողինք այդ գրաւը ի գերեմ հանել. ցոյց տալով, որ հայութիւնը բոլոր դժուարութիւններուն առջեւ կրնայ մէկտեղուիլ, կրնայ միասնական կեցուածք ունենալ եւ պահանջատէր ըլլալ իր ազգային շահերուն եւ իրաւունքներուն: Կարեւոր է, որ մենք կարենանք ի գերեմ հանել բոլոր սաղարկները, որոնք կը փորձեն մեր շարքերը եւ հայութիւնը շլատուած տեսնել:

Մենք միացեալ հակատու պիտի ներկայանանք այս ընտրութիւններուն՝ վերստին փաստելու համար, որ հայութիւնը այս երկրին մէջ ունի իր քաղաքական ուրոյն դեմքը եւ կշիռը:

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻԱՅՅԵԱԼ ՖՈՆՏԻ 109ԴՊ ՕԴՄՆԱԸ ՀԱՍՄԻ ԵՐԵՒՄՆ

Հայկական Միացեալ Ֆոնտի 109րդ օդանաւը Յուլիսի սկիզբին հասաւ Երեւան: Անիկա կրկնէր 6,4 միլիոն տոլար արժողութեամբ մարդասիրական օժանդակութիւն:

5,9 միլիոն տոլար արժողութեամբ դեղորայք եւ բժշկական սարքաւորումներ հաւաքած է ֆոնտը: Այդ օժանդակութեան մեծամասնութիւնը նուիրած են Վ.Միրիւրաբեանը (2,2 միլիոն տոլար) եւ Կարթիկիկ Բժշկական Առաքելութեան խորհուրդը (2,1 միլիոն տոլար): ՀՕՖ-ի ներկայացուցիչ Նուրիձա Ապուտամյա նուիրատու հաստատութիւններու ներկայացուցիչներու ընկերակցութեանը նոյն օդանաւով Երեւան հասաւ: Անոնք պիտի վերահսկեն օժանդակութեան բաշխման աշխատանքներուն:

Ֆոնտին կողմէ մէկ միլիոն տոլար արժողութեամբ դեղորայք եւ բժշկական սարքաւորումներ պիտի առաքուին Լեւնային Ղարաբաղ: 1989-ին ի վեր ՀՕՖ 285 միլիոն տոլար մարդասիրական օժանդակութիւն առաքած է Հայաստան, 109 օդանաւերու եւ 594 ծովային բռնարկողներու միջոցով:

ԱՂԱՍԱՐԳԻՍԵԱՆ ՀԱՍՏ.

<ul style="list-style-type: none"> ❖ SONY ❖ TOSHIBA ❖ PANASONIC ❖ SHARP ❖ PHILIPS ❖ SAMSUNG ❖ PIONEER ❖ MEC 	<ul style="list-style-type: none"> ❖ GENERAL ELECTRIC ❖ WHITE WESTINGHOUSE ❖ KELVINATOR ❖ HOOVER ❖ BOSCH ❖ MOULINEX ❖ BRAUN ❖ MIELE
---	---


ՎՃԱՐՄԱՆ ԳԻՒՐՈՒԹԻՒՆՆԵՐ 36 ԱՄՍՈՒՄՆ ՎՐԱՅ

LISTE DE MARIAGE

Պորճ Համուտ - Զաղաքապետարանի հրապարակ, ՀԵՌԱՉԱՅՆ՝ 01-241000
 Չրդ Մուրը, Սանթրը Պանդուլ: Կառտուըն ապահովուած:

ԾԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ

«Ազգակ»-ի մէջ ազգային կամ առեւտրական ծանուցումներ հրատարակել ֆափաքողներէն կը խնդրուի ծանուցումին քննարկը ընթերցելի գիրով (հաստատութեանց պարագային)՝ նախընտրաբար պաշտօնական թուղթի վրայ, եւ՝ հաստատուած ներկայացնել «Ազգակ»-ի ծանուցումներու գրասենեակը:



ԼԻՔԱՆԱՆԻ ՖՈՒԹԳՈՒԼԻ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՒՄԲԸ ԿԸ ՄԵԿՆԻ ՍԼՈՎԱԲԻԱ

Լիքանանի ֆուտբոլի ազգային խումբը յառաջիկայ Կիրակի օր կը մեկնի Սլովակիա, որ 12 օր կը կատարե մարզական բանակում: Այս նախաձեռնությունը կ'իյնայ Ասիոյ 2000ի մրցաշարի պատրաստութեան ծիրին մէջ: Ազգային խումբը այդ օրերուն կը կատարէ նաեւ 3 մրցումներ՝ առաջնակարգ խումբերու դէմ:

Ազգային խումբը Պրաթիսլաւա կը մեկնի Վիեննայի ճամբով: Պատուիրակութիւնը կը գլխաւորէ ֆետերատիւնի անդամ եւ ազգային խումբի տնօրէն Եուսէֆ Պրոճաւով: Մարզիչ Սքոպլարի կազմը կը բաղկանայ հետեւեալ 24 մարզիկներէն:

Ալի Ֆաթիհ, Ամէտ Սաքր, Ուսահիտ Ֆաթթալ, Ջիւստ Սամսո, Եուսէֆ Մոհամէտ, Ալի Մըթալիպ, Գուրգէն Ենկիպարեան, Ֆայսալ Անթար, Ժամալ Մորկընսաթըրն, Հիւսէյն Չահէր, Ապպա Շահրուր, Ամէտ Նամանի, Ժամալ Թահա, Ռիւստ Անթար, Մուսա Հըթէյժ, Չահէր Անտարի, Մոհամէտ Հալուա, Մոհամէտ Ռիւստ, Հայսամ Չէյն, Ժիլպերթո Տոս Սանթոս, Նարաթ Ժամալ, Նըտրը Սալամէ, Մալթը Հասսուն, Վարդան Դալարեան:

Նշենք, որ ազգային խումբին կը միանան նաեւ Արժանթինէն եւ Պրագիլէն մարզիկներ, որոնք լիքանանեան ծագում ունին եւ եթէ մարզիչը յարմար գտնէ անոնց խաղարկութիւնը, պիտի ներառուին ազգային խումբին մէջ:

ՊԱԹԻՍԹՈՒԹԱՅԻ ՀԱՐՅԸ ԿԸ ՄՏԱՀՈԳԷ ԱՐԺԱՆԹԻՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ

Արժանթինցի միջազգային յառաջադաս Կապրիչի Պաթիսթոն շատ հաւանաբար յառաջիկայ շաբաթէքոտորի դէմ 2002ի Մոնտիալի գտումի մրցումին (Հարաւային Ամերիկայի գօտի) չկարենայ դաշտ ներկայանալ, վիրաւոր ըլլալով: Այն մտաւախութիւնը կայ, որ ան այդ մրցումին ետք Պրագիլի դէմ տեղի ունենալիք կարենաւ ճակատումէն այդ բացակայի, 4րդ յայտնէ մարզիկին գործադարձ Սեթիմի Ալիոզիս:

Ֆիորենթինայէն փոխան 34 միլիոն տոյարի Ա. Էս. Ռոմանի փոխանցուած Պաթիսթոն շաբաթ, անցեալ Յունիս 30ին Քոլոմբոյի դէմ մրցումին (2002ի Մոնտիալի գտում) վիրաւորուած էր: Ան նշանակած էր իր կազմին երկու կոյերը (3 - 1):

Արժանթինի ֆուտբոլի ազգային խումբին բժիշկը յառաջիկայ քանի մը օրերուն ընթացքին պիտի մեկնի Իտալիա՝ Ա. Էս. Ռոմանի բժիշկներուն հետ որոշելու համար, թէ արդեօք ան պիտի կարենայ Պրագիլի դէմ մրցումին իր մասնակցութիւնը բերել:

Արժանթին, որ Հարաւային Ամերիկայի գօտիէն ներս կը գրաւէ ընդհանուր դասաւորման պարագային զիրքը, իր կատարած չորս մրցումներն այ յաղթանակով աւարտած է, ապահովելով առաւելագոյն 12 կէտերը: Պրագիլ, սակայն, արձանագրած է երկու յաղթանակ եւ երկու հաւասարութիւն:

Յառաջիկայ Յունիս 26ին, Սան Փաուլոյի մէջ տեղի ունենալիք այդ մեծ ճակատումին Պաթիսթոն շաբաթ մասնակցութիւնը կը նկատուի շատ կարեւոր՝ Արժանթինի ֆուտբոլի պատասխանատուներուն համար: Պէտք է նշուի, որ երբ Արժանթին եւ Պրագիլ դէմ յանդիման գտնուին ֆուտբոլը կը վերածուի կիրքի երկուստեք...

Հարաւային Ամերիկայի գօտիէն ներս այժմ ընդհանուր դասաւորումը կը ներկայացնէ հետեւեալ պատկերը: (Իրոյն այ կատարած են 4ական մրցում. առաջին չորս զիրքերը գրաւող խումբերը կ'ապահովեն 2002ի Մոնտիալի իրենց տոմսերը, իսկ յոր ցոր ցոր գրաւող կազմը իր տոմսը ապահովելու համար փլէյօֆի մրցում կը կատարէ Ովիանիոյ ախոյաններին հետ):

	ԿէՏ
1.- Արժանթին	12 (12 - 2)
2.- Պրագիլ	8 (5 - 3)
3.- Ռուկուլաէ	7 (4 - 3)
4.- Էքուատոր	6 (7 - 7)
5.- Փարակուէ	6 (5 - 6)
6.- Քոլոմբոյ	5 (5 - 4)
7.- Փերու	4 (4 - 4)
8.- Չիլի	4 (6 - 8)
9.- Վենէզուելա	3 (4 - 11)
10.- Պարագուէ	1 (3 - 7)

ՀԱՐԱՄԱՅԻՆ ԱՓՐԻԿԷ ՅԱՂՈՒԿԱՆ ԿԸ ՀՈՉԱԿՈՒԻ ՖԻՖԱՆ ԿՈՂՄԷ

Անցեալ շաբաթվա ընթացքին Չիլիական «Հարաբե» զաշտին վրայ տեղի ունեցած Չիլիական - Հարաւային Աֆրիկէ մրցումին եւ անոր յաջորդած բախումներուն ընթացքին գոհ գացած 13 հոգիի մահուան պարագան նկատի առնելով, ՖիՖԱն երկն յայտարարեց, թէ այդ զաշտին վրայ միջազգային ոչ մէկ մրցում պիտի կատարուի, մինչեւ այս գոծով իր կողմէ ցնոր տնօրինուած թիւն:

2002ի Մոնտիալի գտումի այդ մրցումը աւարտելու ընթացքին առաջ ընդհատուած էր, համակիրներուն զաշտ խոտովելու պատճառով: Նկատի ունենալով, որ Հարաւային Աֆրիկէ 2-0 արդիւնքով յառաջացած էր նախքան զէքը, ՖիՖԱն կողմէ յաղթական կը հռչակուի:

ՆՆՈՒՆԱՅԻ ՖՐԱՆՍԱՅԻ ԵՐԻՔ ՏԵՔԸՐ ԶԱՆԵՑԱՒ 11ՐԴ ԸՆԵՂՈՒՄԻ ՄՐՑՈՒՄԸ

Հոլանտացի էրիք Տեքըր երկն շահեցաւ Ֆրանսայի շրջափակի 11րդ հանգրուանի մրցումը, որ ունէր 218,5 քմ. երկարութիւն՝ Պանիէր Տը Պիկորէն Ռեվի:

Քոլոմբոյի Սանթիա-Կո Պոթերո հանդիսացաւ երկրորդ, իսկ պեյճիքացի Ռիք Վերպուլի բերորդ: Ամերիկացի Լէնս Արմսթրոնգը կը պահէ յեղին շապիկը:

Երկուսն այս մրցումը, որ գառիվերներով հարուստ էր (Փիլիպիններ, յուններուն մէջ), եղաւ հետաքրքրական: Տեքըր եւ Պոթերո մրցումի աւարտէն թաւակաւ առաջ՝ փոխան մեծ փոխարինելու եւ առանձնացան: Անոնք մրցումը աւարտեցին 4,5 վայրկեան առաւելութիւն ձեռք բերելով մնացեալներուն վրայ: Տեքըր սփրիկըրով գերազանցեց Պոթերոն:

Տեքըրի երկրորդ մրցումը կ'աւարտուի, որ կ'աւարտի յաջողութեամբ: Ան շահած էր նաեւ ճորջ հանգրուանը:

Այսօր տեղի կ'ունենայ 12րդ հանգրուանը՝ Քարփանթրայի վանթոն: Վանթոն հռչակաւոր գալաթ մըն է հարաւային Ֆրանսայի մէջ: Անիկա Ֆրանսայի շրջափակի ամէնէն հետաքրքրական գագաթը նկատուած է միշտ եւ գոյն շահողին անունը «Կանմահանայ»:



Էրիք Տեքըր ժամանցած ցած կը հասնի յատուկ ոճով...

- Ստորեւ՝ երկուսն մրցումին դասաւորումը.
- 1.- էրիք Տեքըր (Հոլանտա) 5 ժամ 5' 47"
 - 2.- Սանթիա Կո (Քոլոմբոյ) 6:01
 - 3.- Ռիք Վերպուլի (Ֆլեմիք) 4' 51" ուշ
 - 4.- Տեյվիտ Միլըր (Ֆրանսիա) 6:01
 - 5.- Ֆրանսիսթո Մանսիո (Սպանիա) 6:01

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՍԱՎՈՐՈՒՄ

- 1.- Լեոն Արմսթրոնգ (Մ. Ն.) 44 ժամ 35' 22"
- 2.- Եան Ռուլիշ (Գերմանիա) 4' 14" ուշ
- 3.- Քրիսթոֆ Մորո (Ֆրանսա) 5' 10" ուշ
- 4.- Մարք Վուլթըր (Ֆլեմիք) 5' 18" ուշ
- 5.- Փիթըր Լուրենցի (Աւստրիա) 5' 21" ուշ

ՀԵՐԱՆ ԲՐԵՍՓՈ ՓՈՒՍԱՆՑԱՆ ՆՈՐ ՄՐՅԱՆԻՉ ՀԱՍՏԱՏԵՑ. 54 ՄԻԼԻՈՆ ՏՈՒՐ

Արժանթինցի միջազգային յառաջադաս Հերան Բրեսփո երկն ֆուտբոլի աշխարհին մէջ փոխանցման նոր մրցանիք մը հաստատեց եւ կոտրեց անցեալ տարի Բրեսփոյի Վիլիամսի հաստատած մրցանիքը, որ Լացիո Ռոմային փոխանցուած էր Ինթեր Միլանի փոխան 50 միլիոն տոյարի: Այս անգամ Լացիո Ռոմա ինք եղաւ աշխարհի նոր մրցանիքը հաստատողը. երբ արժանթինցի մարզիկին փոխանցման համար Փարմայի վճարեց 54 միլիոն տոյար:

1999-2000 եղանակին Հերան Բրեսփո իր ակումբին՝ Փարմայի հետ նշանակած էր 21 կոլ եւ գրաւած կոլաքորը ներու ընդհանուր դասաւորման երրորդ դիրքը:

Ըստ երկու ակումբներուն միջեւ կնքուած համաձայնագրին, Լացիո Ռոմայի մաս կազմող արժանթինցի միջնակարգ Մարիա Ալմէյտա եւ փոթուցալի միջազգային յառաջադաս Սերճիո Քոնչիսթաօ կը մեկնին հակառակ ուղղութեամբ: Սակայն Փարմայ անոնց փոխանցման համար Լացիոյի պիտի վճարէ շուրջ 18 միլիոն տոյարի գումար մը:

Ստորեւ՝ 1992էն ետք փոխանցման գումարի «Ելեւէն»ները (տոյարով).
Հերան Բրեսփո (2000)՝ Փարմայէն՝ Լացիո Ռոմա (54 միլիոն)

Քրիսթիան Վիերի (1999)՝ Լացիո Ռոմայէն՝ Ինթեր Միլան (50 միլիոն)
Նիքոլա Անելլա (1999)՝ Արսենալէն՝ Ռեալ Մատրի (35 միլիոն)

Տենիսոն (1997)՝ Սան Փաուլոյէն՝ Ռեալ Պեթիս (35 միլիոն)
Քրիսթիան Վիերի (1998)՝ Արսենալէն՝ Մատրի (28 միլիոն)
Լացիո Ռոմա (28 միլիոն)
Ռոնալդո (1997)՝ Պարսելոնա (26 միլիոն)

Ռիվալտո (1997)՝ Տեփոթիս Բորնուայէն՝ Պարսելոնա (26 միլիոն)
Անտրի Եմպէնքո (1999)՝ Տիւսուս Բիւնէս Ա. Սէ. Միլան (25 միլիոն)

Էլըն Շիքըր (1996)՝ Պէթըրսի (23 միլիոն)
Ջիանլուիգի Լենթի (1992)՝ Ռոմայէն՝ Ա. Սէ. Միլան (21 միլիոն)



Հերան Բրեսփո

Տուրք Երք (1998)՝ Աստի Կիլիսիէն՝ Մանչեսթըր Ենիայըստ (20 միլիոն)
Ռոնալդո (1996)՝ Փ. Ս. Վ. Այնտիլլիէն՝ Պարսելոնա (20 միլիոն)

Մարսելո Սալա (1998)՝ Ռիվալտո Փիլիպիէն՝ Լացիո Ռոմա (19 միլիոն)
Խուան Վերոն (1998)՝ Սամտորիայէն՝ Փարմա (19 միլիոն)

Ճիանլուեթա Վիլի (1992)՝ Սամտորիայէն՝ Եուվեթոնա (19 միլիոն)
Քրիստիան Վիերի (1998)՝ Սամտորիայէն՝ Սամտորիայէն (19 միլիոն)

Մարսելո Սալա (1998)՝ Ռիվալտո Փիլիպիէն՝ Լացիո Ռոմա (19 միլիոն)
Խուան Վերոն (1998)՝ Սամտորիայէն՝ Փարմա (19 միլիոն)
Ճիանլուեթա Վիլի (1992)՝ Սամտորիայէն՝ Եուվեթոնա (19 միլիոն)

Մարսելո Սալա (1998)՝ Ռիվալտո Փիլիպիէն՝ Լացիո Ռոմա (19 միլիոն)
Խուան Վերոն (1998)՝ Սամտորիայէն՝ Փարմա (19 միլիոն)
Ճիանլուեթա Վիլի (1992)՝ Սամտորիայէն՝ Եուվեթոնա (19 միլիոն)

Մարսելո Սալա (1998)՝ Ռիվալտո Փիլիպիէն՝ Լացիո Ռոմա (19 միլիոն)
Խուան Վերոն (1998)՝ Սամտորիայէն՝ Փարմա (19 միլիոն)
Ճիանլուեթա Վիլի (1992)՝ Սամտորիայէն՝ Եուվեթոնա (19 միլիոն)

Մարսելո Սալա (1998)՝ Ռիվալտո Փիլիպիէն՝ Լացիո Ռոմա (19 միլիոն)
Խուան Վերոն (1998)՝ Սամտորիայէն՝ Փարմա (19 միլիոն)
Ճիանլուեթա Վիլի (1992)՝ Սամտորիայէն՝ Եուվեթոնա (19 միլիոն)

ՔՆԱՐԻԿ ՄՈՒՐԱՏԵԱՆ ԿԸ ՄԱՍՆԱԿՅԻ ԱՇԽԱՐՀԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ

Ճատրակի արարական աշխարհի աղջկանց ախոյեան Քնարիկ Մուրատեան, որ ՖիՖԱ-ն կողմէ արժանացած է նաեւ միջազգային վարպետ տիտղոսին, իրաւունք ստացաւ մասնակցելու աշխարհի ախոյեանութեան մրցումներուն: Կ'արժէ նշել, որ աշխարհի ախոյեանութեան մասնակցելու իրաւունք կը ստանան աշխարհի ամէնէն բարձր դասուած վարպետները, ինչպէս նաեւ 5 ցամաքամասերէն մէկական ներկայացուցիչ, որոնք կ'ընտրուին տուեալ ցամաքամասերուն ֆետերատիւններուն կողմէ:

Ասիոյ ֆետերատիւնը իր ներկայացուցիչը ընտրած է Լիքանանցի արարական աշխարհի աղջկանց ախոյեան՝ Հ.Մ.Ը.Մ.ական քոյր Քնարիկ Մուրատեանը: Ինչ կը վերաբերի տղոց, աշխարհի ախոյեանութեան մասնակցութեան իրաւունք ստացած են հայաստանցի վարպետներ Վլատիմիր Յակոբեան (աշխարհի փոխ ախոյեան), Ռաֆայէլ Վահանեան, Սմբատ Լպուտեան եւ Կարէն Ասրեան:

ԹԵՆԻՍ. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՂԱՍԱԽՈՐՈՒՄ

ԱԿԱՍԻ ԵՒ ՀԻՆԿԻՍ ԿԸ ՄՆԱՆ ԱՌԱՋԻՆ

Թենիսի միջազգային ֆետերատիւնը հրապարակեց տղոց եւ աղջկանց միջազգային նոր դասաւորումը՝ Ուիմպլորտի մրցաշարի աւարտին: Թէեւ Ակասի եւ Հինկիս դուրս մնացին կիսաաւարտական մրցումներուն, սակայն անոնք կը մնան առաջին: Ուշագրաւ է Վինըս Ուիլիամսի մագլցումը՝ աղջկանց պարագային, իսկ Մակնուս Նորմանը՝ տղոց: Ստորեւ տղոց եւ աղջկանց դասաւորման մէջ առաջին տասը դիրքերը գրաւող մարզիկները:

ՏԱՂԵ	ԿԵՏ
1.- Անտոէ Ակասի (Մ. Ն.)	4223
2.- Մակնուս Նորման (Շուէտ)	3495
3.- Փիթ Սամփրաս (Մ. Ն.)	3458
4.- Կուսթաօ Քուէրթէն (Պրագիլ)	3118
5.- Ենկելի Քաֆելնիքով (Ռուսիա)	2989
6.- Ռոման Էնքվիսթ (Շուէտ)	2040
7.- Սետրիք Փիլիք (Ֆրանսա)	1980
8.- Լեյթըն Հուլի (Աւստրալիա)	1974
9.- Մարթ Սաֆին (Ռուսիա)	1948
10.- Ալեքս Գորբախ (Սպանիա)	1860

ԱՂՋԻԿՆԵՐ

	ԿԵՏ
1.- Մարթին Հիլիք (Չեխիա)	6145
2.- Լիոնել Տեյլըր (Մ. Ն.)	5617
3.- Վինըս Ուիլիամս (Մ. Ն.)	3517
4.- Մարի Փիթ (Ֆրանսա)	3424
5.- Քոնցիթա Մարթիկէ (Սպանիա)	2819
6.- Մոնիքա Սեյէ (Մ. Ն.)	2802
7.- Սերենա Ուիլիք (Մ. Ն.)	2594
8.- Նարթի Քոլի (Ֆրանսա)	2174
9.- Արանցա Սանչէս - Վիքարի (Սպանիա)	2040
10.- Անըր Հուլըր (Գերմանիա)	1961

2006Ի ՄՈՆԻՏԻՆԻՆ ԳԾՈՎ

ՖԻՖԱ ԿԸ ՀԱՍՏԱՏԷ ԳԵՐՄԱՆԻՈՅ ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆԸ

Շաբաթակից ՖիՖԱն յայտարարեց, թէ կասկածելի քուէն, որ պատճառ դարձած էր, որ Գերմանիա ըլլայ 2006ի Մոնտիալը հիւրընկալող երկիրը, կը մնայ ի պորտ: Հետեւաբար ոչ մէկ պատճառ կայ, որ վերստին քուէարկութիւն տեղի ունենայ, հակառակ շատերու այն կարծիքին, որ պէտք է քուէարկութիւնը չեղեալ համարել:

Ովկիանիոյ ֆուտբոլի ֆետերատիւնին նախագահը՝ Չարլի Տեմիսայի (78 տարեկան) ձեռնպահ մնալը պատճառ դարձած էր, որ Գերմանիա ապահովէ 12 քուէ եւ իրաւունք ստանայ հիւրընկալելու Մոնտիալը: Եթէ պատահէր, որ նոր վեյանտացի քուէարկէր ի նպատակ Հարաւային Աֆրիկէի, Գերմանիա եւ Նոր Չելանտա հաւաքած պիտի ըլլային 12ական քուէ, որմէ ետք ՖիՖԱ նախագահ Սեփ Պէթըր անձամբ պիտի որոշէր հիւրընկալ երկրին ճակատագիրը (նախապատուութիւնը ան պիտի տար Հարաւային Աֆրիկէի):

Վերստին քուէարկելու համար առաջարկ ներկայացուցած էին Հարաւային Աֆրիկէի պատկերակութեան նախագահը՝ Ըրվին Խոպա եւ Նոր Չելանտայի վարչապետ Հէյն Քլարքը: ՖիՖԱ մէկ պատասխանատուն յայտնեց, որ հակառակ շատերու բողոքին, 2006ի Մոնտիալը հիւրընկալելու հարցը վերջնականապէս փակուած է եւ վերստին քուէարկութեան հարց գոյութիւն չունի:

